

# 2012թ.

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ  
(ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՍՓՈՓԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*Թեմայի անվանումը*

Գիտության և կրթության ազդեցությունը տնտեսական և սոցիալական զարգացման վրա

*Թեմայի իրականացման համար նախատեսված ժամանակահատվածը*

1 ՏԱՐԻ

*Հաշվետու ժամանակահատվածը*

01.01.2012թ. - 31.12.2012թ.

*Թեմայի ղեկավարը*

ՍՈՒՎԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ ՄԻՔԱՅԵԼԻ  
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս  
*Թեմայի մասնակիցներ*

1. Խաչատրյան Վիլեն Վիկտորի – գիտաշխատող
2. Սարգսյան Վարդան Ալբերտի – գիտաշխատող
3. Հարությունյան Վլադիմիր Լիպարիտի – գիտաշխատող
4. Քոչարյան Մարիանա Ռաֆիկի – կրտսեր գիտաշխատող

**Ծրագրի համառոտ բովանդակությունը**

«Գիտության և կրթության ազդեցությունը տնտեսական ու սոցիալական զարգացման վրա» թեմայի արդիականությունը պայմանավորված է գիտակրթական համակարգի ինստիտուցիոնալ մակարդակին առնչվող ռազմավարական արդի հիմնախնդիրներով: Վերջիններս պահանջում են մանրակրկիտ ուսումնասիրություն՝ բացահայտելու համար համաշխարհային փորձի տեղայնացման և հնարավոր ադապտացման ուղղությունները: Այս համատեքստում մեծ կարևորություն է ստանում գիտության, կրթության և արտադրության ինտեգրման հնարավոր ինստիտուցիոնալ մեխանիզմների ձևավորումը, ինչպես նաև միկրո և մակրո

մակարդակներում հիմնավոր բարեփոխումների իրականացումը՝ ապահովելու համար գործուն կապերի շղթան: Առանց վերոնշյալ մեխանիզմների ձևավորման կասկածի տակ կարող է դրվել տնտեսական զարգացման հեռանկարը, իսկ առանց տնտեսական առաջընթացի սոցիալական զարգացում ապահովելը գրեթե անհնար է:

### **Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը**

Ծրագրի շրջանակներում նպատակադրվում է ունենալ՝

1. Ներկայացնել գիտության, կրթության և արտադրության ինտեգրման ռազմավարական գերակայություններն ու կառուցակարգը:
2. Ուսումնասիրել գիտակրթական համակարգի կառավարման կազմակերպական կառուցվածքը և առաջարկել բարեփոխումների հնարավոր ուղղություններ՝ միկրո և մակրո մակարդակներում:
3. Վերլուծել գիտակրթական համակարգի և տնտեսության կառավարման ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման սկզբունքները և մոդելները:

### **Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները**

Գիտական աշխատանքի արդյունքները ներկայացվելու են իբրև թեմայի կատարման հաշվետվություն, հրապարակված գիտական հոդվածներ, զեկուցումներ գիտաժողովներում: